

Մարզային բժիշկների Դիլիջանյան տարեհավաք

ՀՀ մարզային բժիշկների վերապատրաստման ծրագիրը, որ նախաձեռնել է Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդը, 2005-ի հունիսից իրականացվում է Ջինիշյան հիշատակի հիմնադրամի համաֆինանսավորմամբ: Այն նպատակ ունի բարձրացնելու ՀՀ մարզերի բնակչության առողջապահական սպասարկման որակը՝ աջակցելով ՀՀ մարզերում աշխատող բժիշկների վերապատրաստմանն ու շարունակական ուսուցմանը:

Ծրագրի շրջանակներում մինչ օրս Երեւանի առաջատար բուժհաստատություններում, ի մասնավորի ԵՊԲՀ կլինիկաներում, մեկամսյա վերապատրաստում են անցել ՀՀ տարբեր մարզերի, Լեռնային Ղարաբաղի եւ Ջավախքի շուրջ 140 բժիշկներ: Ստեղծված բժշկական ցանցի միջոցով նրանք մշտական կապ են պահպանում միմյանց եւ իրենց Երեւանյան գործընկերների հետ: 2006թ. սեպտեմբերից սկսյալ վերապատրաստում անցած բժիշկների վկայագրերը հաստատվում են ՀՀ Առողջապահության նախարարության կողմից:

Մարզային բժիշկների միջեւ կապն ավելի խորացնելու եւ արդյունավետ դարձնելու նպատակով նախորդ 2 տարիներին Ծաղկաձորում կազմակերպվեցին տարեհավաքներ՝ մասնակցությամբ ՀՕՖ-ի ծրագրի բոլոր շահառուների: Այս տարի եւս սույն ծրագրի շրջանակներում Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առողջարանում անցյալ շաբաթավերջին անցկացվեց բժիշկների որակավորման **երկօրյա սեմինար**, որին մասնակցեցին թվով 120 բժիշկներ ՀՀ մարզերից եւ ԼՂՀ-ից: ԵՊԲՀ հետդիպլոմային կրթության բաժնի պետ **Գեւորգ Յաղջյանը** մասնակիցներին ներկայացրեց պետական բժշկական համալսարանի շարունակական կրթության ներկա պատկերը՝ միաժամանակ անդրադառնալով ՀՕՖ-ԵՊԲՀ արդյունավետ համագործակցությանը: «Ձալցբուրգի միջազգային բժշկական սեմինարներ» ծրագրի համակարգող **Բելլա Գրիգորյանը** ներկաներին ծանոթացրեց սույն ծրագրին դիմելու կարգին եւ մանրամասներին: Ապա դասախոսություններ կարդացվեցին արդի բժշկական խնդիրների եւ դրանց լուծման ուղիների շուրջ: Մասնավորապես, հանրապետության ճանաչված մասնագետների կողմից ներկայացվեցին դասախոսություններ սիրտ-թոքային եւ սիրտ-անոթային հիվանդությունների, վիրաբուժական, գինեկոլոգիական, տարափոխիկ հիվանդությունների, ինչպես նաեւ հանրային առողջապահության կազմակերպման ու ապացուցողական բժշկության վերաբերյալ:

Սեմինարին իրենց մասնակցությունը բերեցին ՀՀ Առողջապահության պետական գործակալության պետ, պրոֆեսոր Արա Տեր-Գրիգորյանը, Տավուշի մարզի առողջապահության վարչության պետ Կարինե Դովլաթբեկյանը, Դիլիջան քաղաքի բժշկական կենտրոնի տնօրեն Սիլվա Պետրոսյանը եւ այլ պաշտոնատարներ:

ՀՕՖ-ի Լրատվական կենտրոն